ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.5-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

2026 թվականի մարտի 12-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/2.5-26 արձանագրությամբ կայացված որոշման կատարման վերաբերյալ՝

Նշվեց, որ

2026 թվականի մարտի 12-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/2.5-26 արձանագրությամբ որոշվել էր՝

- **առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպությանը՝

  -«Տպարան» ՍՊԸ-ին՝ խմբագրել ֆինանսական առաջարկը՝ բյուջեում առանձնացնելով ԱԱՀ համար առանձին տող:

Միաժամանակ նշվել էր, որ Հանձնաժողովի կողմից առաջարկվող շտկումը կատարելուց և շտկված տարբերակը ներկայացնելուց հետո կազմակերպությունը կճանաչվի հաղթող և նրա հետ կկնքվի համապատասխան դրամաշնորհային պայմանագիր:

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 1 (մեկ) կազմակերպություն՝ «Տպարան» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը՝ այն է, բյուջեում առանձնացնելով ԱԱՀ համար առանձին տող (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

   - «Տպարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

   - «Տպարան» ՍՊԸ-ի հետ՝ 24,000,000.0 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ 4,000,000.0 (չորս միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան -

Դ.Կարապետյան -

Ա.Բաբայան -

Ա.Ոսկանյան -

Լ.Բասմաչյան -

Շ.Հովսեփյան -